

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 450 դր.  
» Գաւառաց » 460 »  
» Օտար երկիրներու » 480 »  
» Եղեմեանայ Կ. Պոլսոյ » 75 »  
» Գաւառաց » 80 »  
Իւրաքանչիւր թերթի գին 60 փր.  
Ծանուցման տողը մէկ անգամի հա-  
մար 2 դուրուշ, երկու անգամի հա-  
մար 60 փարսյ, աւելի անգամնե-  
րու համար 40 փարսյ :



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 4 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ մէջ խորհրդարանի դը-  
րութիւնն առաջ երթալու վրայ է :  
Ներքին գործոց վրայ բացուած վի-  
ճարանութենէն ետեւ ուրիշ երկար  
վիճարանութիւն մ'ալ եղաւ Օրէնքա-  
գիր ժողովոյ մէջ պաշտօնական ընտ-  
րելեաց խնդրոյն վրայ : Կառավարու-  
թեան պաշտօնականներն յայտարարու-  
թիւն ըրին թէ այսուհետեւ կատար-  
եալ չեղորութիւն պիտի պահէ տե-  
րութիւնը երեսփոխանական ընտրու-  
թեանց մէջ, եւ ասիկա բաւական դո-  
հուծիւն կը պատճառէ լրագրաց :

Օրէնքագիր ժողովոյ մէջ նստին մէջ  
ալ ուշագրութիւն հրաւիրեցաւ պա-  
պական գրամոց վրայ : « Հռոմի վեհա-  
կառավարութիւնն աղքատ է, բայց ան-  
պուշտ է : Կ'ըսէ իսթուար վրագիրը :  
Երբեք անմիջական միջոցներով ունի խիստ  
պարզ, բայց արդիւնաբեր, նախնա-  
կան բայց անսխալական : Պրանք մը  
կ'առնու, 91 սանթիմ կուտայ, զուտ  
չափ 9 սանթիմ : Այս հանճարեղ դա-  
ղափարն Աթինէն կարգիւնալին ու-  
ղղիւն մէջ ծնած ըլլալու է, որ Հռո-  
մի մէջ Ուլիշիէոյ կամ Մաղարէնի դեր  
կը խաղայ : Օր մը Գերապոյճառնե-  
րուն յաճախ լիստուռն վաճառած պա-  
պական դանձին մէջ քիչ մ'արծաթ  
ընցնելու միջոցներուն վրայ խորհած  
ժամանակ ինքնիրեն մտածեց թէ  
քանի մը տարիէ ի վեր Հռոմի մէջ  
այնչափ ստակ չ'կոխուիր, ուստի որո-  
շեր է որ Պապին պատկերովն արծաթ  
փրանքներ կ'որոշէ տայ 91 սանթիմ ար-  
ժէքով : Այս ինք սանթիմը հասարա-  
կութեան վնաս մ'է, բայց անուղղա-  
կի Ս. Պետրոսի գեներալ մը, զոր բողո-  
քականներն ու Հրեայներն ալ կը վը-  
ճարեն : Հիմա Գաղղիոյ մէջ այս ըս-  
տականքն 30 միլիոն մտած հաշիւ  
կ'ըլլայ, որով Պապին դանձը 2 միլիոն  
700,000 փրանքի փոքրիկ գումար մը  
կը մանէ : Ի վնաս այս այլընտել  
դը-  
րամն աւանդներուն : »

Պէրճիքային Նոս լրագրին փարի-  
զէն գրուած նամակ մը կը ծանուցա-  
նէ թէ « այս օրերս դարձեալ կը դը-  
րուցուի որ Նաբոլէոն կայսրը միտք  
ունի յարմար ժամանակի մը հրաժա-  
րական տալ եւ կայսրորդի իշխանը  
գնել իր տեղ : Կերեւի թէ շատ մը  
մեծ պաշտօնատարներ, որք կայսեր  
հին հաւատարմներն են, այս դէպ-  
քին կատարուելէն վերջն իրենց պաշ-  
տօնէն պիտի հրաժարին : Բայց յալըն  
պաշտական պաշտօնատար մը կը  
խօսուի, որ կայսեր կողմանէ շատ կը  
յարգուի, պատուանշաններ եւ մեծ  
վարձատրութիւններ առած է, եւ  
հանգստեան կը փոխալի : Բայց հա-  
տատապէս որոշած է թէ մինչեւ որ

կայսրն իւր ձեռամբ իշխանութիւնը  
կայսերազուն իշխանին չ'յանձնէ, իւր  
պաշտօնէն չ'ընէ : »

Բեղրադոսի լրագրները կը  
ծանուցանեն թէ Նիկիթիսթ (ոչնչա-  
կան) ըսուած դաւադրաց մէջէն մին-  
չեւ հիմա եղած ձերբակալութիւննե-  
րն 300ի կը հասնին : Բայց ասիկա  
պաշտօնապէս հրատարակուած թիւն  
է, եւ կը կարծուի որ ձերբակալութիւն-  
ներն աւելի շատ են : Ռուսիոյ կառավա-  
րութիւնը համոզուած ըլլալով որ Սիպե-  
րիա դառնուող Լեհ քաղաքները վը-  
նասակար աղղեցութիւն մը կը բա-  
նեցնեն ժողովրդեան վրայ, որոշեց որ  
այսուհետեւ անոնք Ջաքոնի Արշիպի-  
զադոսին մէջ Ամուր գետին բերանը  
Սաքալին կողմէն փոխադրուին, որ կ'ը-  
սուի թէ քաղաքական յանցանորմե-  
րու համար արքայապետ յանգի մը պի-  
տի ըլլայ : Եւ ներկայ դաւադիրներուն  
դատը վերջանալէն ետեւ այն հեռա-  
ւոր կողմէն բաղմամբ կ'ըսուի պիտի դը-  
րուին :

Անցեալ գեկտեմբեր ամսոյ մէջ 120  
անկիլիքաններու ստորագրութեամբ  
աղերսագիր մը ներկայացաւ Ռուսիոյ  
Ս. Սինոդին, որք Անկիլիքան եւ Օրթո-  
տոքս եկեղեցեաց միութեան փախաբ  
կը յայտնեն : Այս աղերսագիրը քննե-  
լու համար Սինոդը յանձնաժողով մը  
կարգեց, ուր ջաց ի Սինոդականներէ,  
Լոնտոնայի ռուսական գեկտեմբերեան  
քահանայ Բոբօք արքիմանտրիտը, եւ  
Աւստրիացի Օլէրպէք վարժապետը  
որ Արեւմտեց մէջ Օրթոտոքսութիւն  
ծաւալողներէն մէկն է, անդամ կար-  
գեցան :

Բեղրադոսի լրագրէն Տը լր Պուրս  
լրագրին տար վրայ հետեւեալ խորհը-  
ղածութիւնը կ'ընէ :

« Օրթոտոքս եւ Անկիլիքան եկե-  
ղեցեաց միութեան խնդիրը քննելու  
համար Ս. Սինոդին կազմած յանձնա-  
ժողովին մինչեւ հիմա ինչ գործ տե-  
սած ըլլալը չ'գիտենք : Բայց այս ըս-  
տոյց է որ Անկիլիքան եկեղեցին պէտք  
է Արեւելեան եկեղեցեցոյ մօտենայ,  
քանզի խիստ առանձին գիրքի մը մէջ  
կը գտնուի հիմա : Անկիլիքան եկեղե-  
ցին Հռոմի հետ միութիւնը խզելէ ե-  
տեւ բոլորովն բաղդականութեան  
յարած է : Եւ եկեղեցական գերա-  
դոյն նուիրապետութիւնը, ինչպէս նա-  
եւ արարողութեանց շքեղութիւնը  
պահած է : Արեւելեան եկեղեցեցոյ ա-  
ւանդապահ ոգին Անկիլիքան եկեղեց-  
եցոյ մէջ ու մինչեւ յարգ կեցած է :  
Անշուշտ երկու եկեղեցեաց միութեան  
դէմ շատ մը կանոնական եւ ծիսակա-  
ն դժուարութիւններ կան, բայց որ եւ  
պարտաւոր մէջ Անգլիկացեաց մեզ հետ  
միանալու համար ցոյց տուած փախա-  
բանաց անկեղծութեան վրայ կարելի  
չ'է կասկածիլ : »

Կողմէ Տը լր Պուրս այս անկեղ-  
ծութեան ապացոյց կը համարի Շիրա-

յի Արքեպիսկոպոս Գեր. Լիկուրգոսին  
Անգլիոյ մէջ գտած ընդունելութիւնը  
եւ այս առթիւ Լոնտոնայի եպիսկոպո-  
սին հրապարակաւ ըսած այս խօսքը.  
« Այս վայրկեան մէջ՝ ուր Հռոմ մա-  
հալու հարուած մը կուտայ քրիստո-  
նէական աշխարհին միութեան, ան-  
հրապարհ է որ մեծ կարեւորութիւն  
չ'ընծայուի այն ամեն դէպքերուն՝ որք  
արեւելեան եւ արեւմտեան երկու ե-  
կեղեցեաց միութեանը կը նպաստեն :

Աւստրիաց կայսեր եղբայր Ալբրէրթ  
արշիպիսկոպոս փարիզ ուղեւորութիւն  
մը ըրաւ, եւ խիստ լաւ ընդունելու-  
թիւն գտաւ Նաբոլէոն կայսրէն : Ո-  
մանք այս ուղեւորութեան քաղաքա-  
կան նպատակներ տալի ուղիքն, բայց  
վիճենայի արքունիքն այս ենթացողու-  
թիւնները բարբոթին սուտ կը հանէ :

Պոնտիփացեաց ինքնօրինութեան կու-  
տակից մասը որոշեց ի որ Աւստրիոյ  
նոր պաշտօնէին առաջարկութիւննե-  
րը մերժեն : Բայց իրենց յայտարարու-  
թիւնը՝ ներկայ պաշտօնէին հետ բա-  
նակցութիւնն անկարելի համարելով  
հանգերձ՝ կը ծանուցանէ թէ ինչ  
ի՛նչ պարագայից ներքեւ լուրջ բա-  
նակցութիւն մը կրնայ բացուիլ :  
Դաւաճախող ապստամբութիւնը մարե-  
լու վրայ է, բայց յիշեալ դաւաճին  
մէջ սոյն երեւան կ'ընէ եւ կառա-  
վարութիւնն ալ հիմա ասոր դարմա-  
նը խորհելու դրաւած է :

Բրուսիոյ թագաւորը քիչ մը տը-  
կարութիւն ունի եղեր եւ բժիշկները  
խորհուրդ տուեր են որ Ֆրանսիացա-  
նորդներն երթայ : Եւ իսկ թէ Գալիէ-  
մոս թագաւորը միտք ունի նաեւ մար-  
տի կամ ապրիլի մէջ Ռուսիոյ կայսեր  
այցելութիւն մը տալ թէ՛ արդէն կե-  
ցած բարեկամութեան կապերն սո-  
րապնդելու եւ թէ՛ Ռուսիոյ դաճա-  
ժաւանդ Մեծ-Գուքն ալ Բրուսիա-  
կան դաշնակցութեան կողմը շահելու  
համար : Գերմանական խորհրդարանը  
բոլոր հիւսիսային Գերմանիոյ համար  
միաձեւ օրէնքներ մը հաստատելու  
ղեղաւած է, որ կրնուի թէ խիստ ա-  
զատամիտ սկզբնայ վրայ կը հիմնուի,  
քանզի մահուան պատիժը կը բաւանայ,  
թէ եւ թագաւորն ասիկա իր ստորո-  
գելեաց յախջտակութիւն մը կը հա-  
մարի, մինչեւ հիմա մահուան կամ  
չնորհի իրաւունքն իրեն վերապահեալ  
ըլլալուն համար :

Հռոմի մէջ փարիզի Լիպէրթէ լը-  
րագրին գրուած նամակի մէջ հետեւ-  
եալ տեղեկութիւնները կը կարդանք :

« Կըսուի թէ Զատիկն մօտերը Պա-  
պին անսխալականութիւնն անպատ-  
ճառ պիտի հրատարակուի : Ասոր հա-  
մար ամեն հնարք ի գործ կը դնեն  
ճիշդ թիւններ, եւ իրենց խօսքին նա-  
յելով՝ օր քան օր յաջողութիւն կը  
գտնեն : Շատ աղէկ, որ շատ շուտով  
Պապին անսխալականութիւնը հրատա-

րակուի, ա՛յնչափ շուտով պապութիւ-  
նըն ալ կը կործանի : Վասն այս կետա-  
րական-բիւզանդեան դրութեան ժա-  
մանակն անցած է :

« Արքայաբեւ շատ զուարճալի բան  
է այս անսխալականութեան պահան-  
ջումը : Պապն ինքզինք ընդհանրական  
ժողովէն գերադոյն կը համարի եւ իր  
անսխալականութիւնը նոյն ժողովին  
վճռել տալ կուզէ : Ի՛նչ անտեղի հա-  
կառութիւն : Տրամաբանապէս խորհե-  
լով, չէ թէ ժողովին կի յայ Պապն  
անսխալ հրատարակել, այլ Պապին կի յ-  
նայ ըսել ժողովին թէ « ես անսխալ  
եմ » : Վճիռը ժողովէն սպասելն անոր  
գերազուցութիւնը ճանչել, եւ անսը-  
խալականութեան հակառակ վարդա-  
պետութիւն մ'ընդունիլ է : Խառնա-  
շփոթութիւն մը, որուն նմանը տես-  
նուած չէ : Հոգին սուրբ անգամ ինք-  
զինք չ'պիտի կրնայ ճանչել, կաթոլիկ  
թերթերը ծանուցին թէ Հոգին սուրբ  
Հռոմ հասեր է, բայց եւ կրնամ հա-  
ւաստել թէ այս լուրը սուտ է : Դեռ  
Հոգին սուրբ երեւցած չէ հոս, եւ ե-  
րեւալիք ալ չունի : Բաղնիք կան  
թէ յաւիտեական քաղքին օգն իրեն  
չ'յարմարիր :

« Պաշտօնական լրագիրն երկու հե-  
տաքըքրաշարժ կոնդակ կը հրատա-  
րակէ, որովք Ս. Պապն արեւելեան  
արքեպիսկոպոս մ'է : Եպիսկոպոս մը  
կանուանէ, զորս Գաղղեացեաց պատ-  
րիարքն ամսոյ 30 ին՝ ձեռնադրեց :  
Այսպիսի եպիսկոպոսական անուանում  
մը մինչեւ հիմա տեսնուած բան չ'էր,  
եւ նպատակն է փաղեկացող պատ-  
րիարքին նախագահած եկեղեցեցոյն ան-  
կումը վերահաստատել, զոր Պապը  
ինչպէս արդէն ծանուցած եմ՝ բռնու-  
թեամբ կորզեց յիշեալ պատրիարքին  
ձեռքէն : »

Նոյն քաղքէն գաղղիական Լա Ֆը-  
րանս լրագրին գրուած նամակի մը  
մէջ ալ հետեւեալը կը կարդանք :

« Մանկանց քրիստոնէականիւնն վը-  
րայ վիճարանութիւնը մեծ դժուա-  
րութեամբ կը շարունակէ ընդհանրա-  
կան ժողովին մէջ, ուր ամենէն ամուր  
ձայն տնկցող տոնեալստներն հապիւ-  
ժողովականաց երրորդ մասէն կը լը-  
ուին : »

« Սէն Ֆրէժի եպիսկոպոս Սոն-  
սինօր Տալիտ՝ Օրէնքի եպիսկոպո-  
սին պէս յաջողութեամբ մտաւեցաւ  
Պէրաքմիտի քրիստոնէականիւնն դէմ,  
եւ հզօրապէս հաստատեց թէ այն քը-  
րիստոնէականն անկատար ըլլալէ զատ  
անընդունելի է մանկանց համար :

« Մոսկովն օր վէրօ ալ ըսաւ թէ  
քրիստոնէականի մասին միութիւն  
հաստատել տալ պէտք է եկեղեց-  
եցոյ կանոնաց եւ պատուիրանաց մէջ մի-  
ութիւն հաստատել : Տօներ կան որ  
ամեն տեղ մի եւ նոյն օրը չ'են կա-  
տարուի կաթոլիկութեան մէջ պա-  
հոց օրերը մի եւ նոյն չ'են շատ թե-  
մերու մէջ ուրբաթ եւ շաբաթ օրե-





